ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 18-Լ **«19» սեպտեմբերի, 2025 թ.**

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԱԿԻՑ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ «ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 38-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ ՊԱՀԱՆՋԸ ՉԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԱԶԱՏՎԱԾ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ՝ «ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ 2025-2026 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կրթության մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի «Կրթություն» բաժնի 17-րդ կետի 17.1-2 ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝

1) միջին մասնագիտական պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատությունների հարակից ոլորտների մասնագիտություններով ամփոփիչ ատեստավորում անցած շրջանավարտների, ինչպես նաև

«Հանրակրթության մասին» օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը չբավարարելու պատճառով աշխատանքից ազատված ուսուցիչների՝ «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի բակալավրի կրթական ծրագրերով 2025-2026 ուսումնական տարվա հեռակա ուսուցմամբ փորձնական ընդունելության կարգը՝ համաձայն հավելված N 1-ի:

2) «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կրթական ծրագրերը և ընդունելության տեղերը, որոնցով 2025-2026 ուսումնական տարում թույլատրվում է միջին մասնագիտական պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատությունների հարակից ոլորտների մասնագիտություններով ամփոփիչ ատեստավորում անցած շրջանավարտների կրթության շարունակումը, ու միջին մասնագիտական հարակից ոլորտների մասնագիտությունները՝ համաձայն հավելված N 2-ի:

2. Սահմանել, որ «Հանրակրթության մասին» օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը չբավարարելու պատճառով աշխատանքից ազատված ուսուցիչների ընդունելությունը կատարվում է լիցենզիայով տվյալ մասնագիտությանը հատկացված տեղերի սահմանում:

Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

/պարտականությունները կատարող/

Հավելված N 1

Հայաստանի Հանրապետության կրթության,
գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2025 թվականի մայիսի 19-ի N 18-Լ հրամանի

Կ Ա Ր Գ

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ «ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 38-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ ՊԱՀԱՆՋԸ ՉԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԱԶԱՏՎԱԾ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ՝ «ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ 2025-2026 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ ՄՄՈՒՀ) հարակից ոլորտների մասնագիտություններով ամփոփիչ ատեստավորում անցած շրջանավարտների, ինչպես նաև «Հանրակրթության մասին» օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը չբավարարելու պատճառով աշխատանքից ազատված ուսուցիչների (այսուհետ՝ հավակնորդ)՝ «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամում (այսուհետ՝ ՀՊՄՀ) 2025-2026 ուսումնական տարում հեռակա ուսուցմամբ բակալավրի համապատասխան կրթական ծրագրերով առաջին կուրս փորձնական ընդունելության հետ կապված հարաբերությունները:

2. Հավակնորդների ընդունելությունը ՀՊՄՀ-ում առաջնահերթ կազմակերպվում է միջին մասնագիտական պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատությունների հարակից ոլորտների մասնագիտությունների՝ սույն կարգի շրջանակներում ընդունելություն կազմակերպելու համար հաստատված ցանկին (այսուհետ՝ նաև հավելված N 2) համապատասխան, վճարովի հիմունքով՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված արտոնություններ ունեցող հավակնորդների:

3. Սույն կարգով ընդունելություն կազմակերպելու համար ՀՊՄՀ ընդունող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 5 աշխատանքային օրվա ընթացքում հրապարակում է հավակնորդների դիմումների ընդունելության վերաբերյալ հայտարարություն՝ նշելով դիմումների ընդունման վայրը, ժամկետները, ըստ մասնագիտությունների ուսման վարձի չափը, ըստ մասնագիտությունների տեղերի թիվը և այլն:

4. Հավակնորդների փաստաթղթերը ընդունվում են մինչև 2025 թվականի հոկտեմբերի 24-ը ներառյալ:

5. Փաստաթղթերի փաթեթը ներառում է՝

1) դիմում՝ ուղղված ՀՊՄՀ ռեկտորին,

2) միջին մասնագիտական կրթությունը հավաստող ավարտական փաստաթղթի՝ դիպլոմի և դրա ներդիրի կրկնօրինակները («Հանրակրթության մասին» օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը չբավարարելու պատճառով աշխատանքից ազատված ուսուցիչները ներդիրը ներկայացնում են առկայության դեպքում, իսկ միջին մասնագիտական կրթություն չունենալու պարագայում՝ ներկայացնում են միջնակարգ կրթությունը հավաստող ավարտական փաստաթուղթ՝ ատեստատ),

3) երկու լուսանկար (3x4 չափսի).

4) անձը հաստատող փաստաթղթի պատճենը (անձնագիր կամ նույնականացման քարտ կամ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության բաժինների կողմից տրվող անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ, կացության վկայական, փախստականի վկայական).

5) զինվորական գրքույկ կամ կցագրման վկայականի պատճենը (միայն արական սեռի հավակնորդների համար).

6) հանրակրթական ուսումնական հաստատությունում ուսուցչի պաշտոն զբաղեցնելու փաստը հավաստող տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում), աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին իրավական ակտի պատճենները.

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված արտոնություններից օգտվելու վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը (դրանց առկայության դեպքում):

6. Եթե ՀՊՄՀ ընդունվելու հավակնորդների թիվը գերազանցում է հավելված N 2-ով հաստատված ըստ կրթական ծրագրերի տեղերի թիվը, ապա հանձնաժողովը հավակնորդների ընտրությունն իրականացնում է մրցութային հիմունքներով՝ առաջնահերթությունն ըստ հաջորդականության տալով այն հավակնորդներին, ովքեր ունեն՝

1) գերազանցության ավարտական փաստաթուղթ (գերազանցության դիպլոմ).

2) ավարտական փաստաթղթի (դիպլոմի) ներդիրի գնահատականների առավելագույն միջին թվաբանական (միջին թվաբանականը հաշվարկելիս անցում է կատարվում 20 միավորային համակարգի և այն կլորացվում է տասնորդականի ճշտությամբ).

3) պետական ամփոփիչ ստուգման արդյունքում առավել բարձր միավորներ:

7. Սույն կարգի համաձայն մրցույթն անցկացվում հոկտեմբերի վերջին շաբաթվա ընթացքում:

8. Հանձնաժողովի ներկայացրած ընդունելության արդյունքների հիման վրա ՀՊՄՀ-ի ռեկտորը մինչև 2025 թվականի նոյեմբերի 7-ը հրամանագրում է հավակնորդներին և 5-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կրթության,

գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն է ներկայացնում հաշվետվություն (Ձև 1):

9. Հրամանագրված ուսանողները ՀՊՄՀ են ներկայացնում ավարտական փաստաթղթի՝ դիպլոմի և դրա ներդիրի բնօրինակը:

10. «Հանրակրթության մասին» օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը չբավարարելու պատճառով աշխատանքից ազատված ուսուցիչների ուսման վարձի փոխհատուցման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 2-ի N 621-Լ որոշմամբ:

Հավելված N 2

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2025 թվականի մայիսի 19-ի N 18-Լ հրամանի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԸ, ՈՐՈՆՑՈՎ 2025-2026 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ Է ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄԸ ՈՒ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դասիչ	**Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան**	**Տեղերի թիվը**	**ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի 12-ի N 73-Ն որոշմամբ հաստատված միջին մասնագիտական համապատասխան կամ հարակից ոլորտների մասնագիտությունները**
011201.00.6	**Նախադպրոցական մանկավարժություն**		
011201.01.6	Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա	15	011 Կրթություն ոլորտի 0112 Նախադպրոցական կրթություն բաժնի մասնագիտություններ

011301.00.6	**Ընդհանուր մանկավարժություն**		
011301.01.6	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	15	011 Կրթություն ոլորտի 0112 Նախադպրոցական կրթություն բաժնի մասնագիտություններ
011301.03.6	Սոցիալական մանկավարժություն	15	011 Կրթություն ոլորտի 0112 Նախադպրոցական կրթություն, 09 Առողջապահություն և սոցիալական աշխատանք ոլորտի 0913 Քույրական գործ և 0923 Սոցիալական աշխատանք բաժինների մասնագիտություններ
011302.00.6	**Հատուկ մանկավարժություն**		
011302.04.6	Լոգոպեդիա	15	011 Կրթություն ոլորտի 0112 Նախադպրոցական կրթություն, 09 Առողջապահություն և սոցիալական աշխատանք ոլորտի 0913 Քույրական գործ և 0923 Սոցիալական աշխատանք բաժինների մասնագիտություններ
011302.05.6	Հատուկ մանկավարժություն	15	011 Կրթություն ոլորտի 0112 Նախադպրոցական կրթություն, 09 Առողջապահություն և սոցիալական աշխատանք ոլորտի 0913 Քույրական գործ և 0923 Սոցիալական աշխատանք բաժինների մասնագիտություններ

011401.00.6	**Մասնագիտական մանկավարժություն**		
011401.19.6	Հայոց լեզու և գրականություն	15	011 Կրթություն ոլորտի 0112 Նախադպրոցական կրթություն, 0415 Քարտուղարություն և գրասենյակային աշխատանք և 1015 Զբոսաշրջություն բաժինների մասնագիտություններ
011401.12.6	Տեխնոլոգիա և ձեռնարկչություն	15	0713 Էներգետիկա և էլեկտրատեխնիկա, 0714 Էլեկտրոնիկա և ավտոմատացում, 0715 Մետալուրգիա և մեքենաշինություն բաժինների մասնագիտություններ
011401.18.6	Պատմություն	20	0421 Իրավունք և 0322 Գրադարանավարություն, տեղեկատվություն և արխիվավարություն բաժինների մասնագիտություններ
011401.11.6	Կերպարվեստ	20	0114 Առարկայական ուղղվածությամբ դասավանդում /Կերպարվեստ և գծագրություն/ 0212 Նորաձևություն, ներքին հարդարման և արտադրական դիզայն, 0213 Գեղանկարչություն և քանդակագործություն, 0214 Կիրառական արվեստ բաժինների մասնագիտություններ
011401.13.6	Երաժշտական կրթություն	15	0114 Առարկայական ուղղվածությամբ դասավանդում /Երգ և երաժշտություն/, 0215 Երաժշտություն և կատարողական արվեստ բաժնի մասնագիտություններ (բացի Պարարվեստ, Դերասանական արվեստ, Կրկեսային արվեստ, Երաժշտական գործիքների պատրաստում և նորոգում մասնագիտություններից)

011401.14.6	Պարարվեստ	5	0114 Առարկայական ուղղվածությամբ դասավանդում /Պարի ուսուցում/ 0215 Երաժշտություն և կատարողական արվեստ բաժնի «Պարարվեստ» մասնագիտություն
011401.20.6	Ռուսաց լեզու և գրականություն	15	0415 Քարտուղարություն և գրասենյակային աշխատանք և 1015 Զբոսաշրջություն բաժինների մասնագիտություններ բաժնի մասնագիտություններ
011401.21.6	Անգլերեն լեզու և գրականություն	15	0415 Քարտուղարություն և գրասենյակային աշխատանք և 1015 Զբոսաշրջություն բաժինների մասնագիտություններ բաժնի մասնագիտություններ
011401.30.6	Մաթեմատիկա-ֆիզիկա	25	0411 Հաշվապահություն, 0412 Ֆինանսներ, բանկային գործ և ապահովագրություն, 0713 Էներգետիկա և էլեկտրատեխնիկա, 0714 Էլեկտրոնիկա և ավտոմատացում, 0715 Մետալուրգիա և մեքենաշինություն բաժինների մասնագիտություններ
011401.31.6	Մաթեմատիկա-ինֆորմատիկա	25	0611 Ինֆորմատիկա, 0612 Տվյալների բազաների և տեղեկատվական ցանցերի ստեղծում և կառավարում բաժինների մասնագիտություններ
011401.32.6	Կենսաբանություն-քիմիա	25	0521 Շրջակա միջավայր, 0712 Շրջակա միջավայրի պահպանություն, 0722 Նյութեր (բացի Փայտամշակման տեխնոլոգիա մասնագիտությունից), 0711 Քիմիական ճարտարագիտություն և տեխնոլոգիաներ, 0914 Բժշկական ախտորոշում (դիագնոստիկա) բաժինների մասնագիտություններ
011401.33.6	Աշխարհագրություն-բնագիտություն	25	0521 Շրջակա միջավայր, 0532 Երկրաբանություն, 0724 Ընդերքաբանություն բաժինների մասնագիտություններ

011401.08.6	Հասարակագիտություն	15	0322 Գրադարանավարություն, տեղեկատվություն և արխիվավարություն, 0421 Իրավունք բաժինների մասնագիտություններ
031301.00.6	**Հոգեբանություն**		
031301.01.6	Հոգեբանություն	10	011 Կրթություն ոլորտի 0112 Նախադպրոցական կրթություն, 09 Առողջապահություն և սոցիալական աշխատանք ոլորտի 0913 Քույրական գործ և 0923 Սոցիալական աշխատանք բաժինների մասնագիտություններ
031301.02.6	Էրգոթերապիա	10	011 Կրթություն ոլորտի 0112 Նախադպրոցական կրթություն, 09 Առողջապահություն և սոցիալական աշխատանք ոլորտի 0913 Քույրական գործ և 0923 Սոցիալական աշխատանք բաժինների մասնագիտություններ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատությունների ամփոփիչ ատեստավորում անցած շրջանավարտների կրթությունը ՀՊՄՀ -ում շարունակելու վերաբերյալ

Անունը, ազգանունը, հայրանունը	Ուսումնառած ՄՄՈՒՀ-ի անվանումը	ՄՄՈՒՀ-ում ուսումնառած տարեթիվը	Ուսումնառած մասնագիտության անվանումը և որակավորումը	ՀՊՄՀ-ի համապա-տասխան կրթական ծրագրի անվանումը և որակավորումը	Այլ տվյալներ